2020

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծություն

ՀՖԿՍՊԻ-ն կարևորում է կրթության որակի ապահովման գործընթացներում բուհի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ նպատակ ունենալով նպաստել որակի մշակույթի ձևավորման մեջ տարբեր շահակիցների ներդրումներին, նրանց դերակատարության ավելացմանը կառավարման գործընթացներում, շահակիցների արդյունավետ համագործակցությանն ու որոշումների թափանցիկ կայացմանը, ինչպես նաև ձևավորել մթնոլորտ, երբ բոլոր շահակիցները պատասխանատվություն են կրում արդյունքների որակի համար:

Այս առումով Ինստիտուտում մշակվել և ներդրվել են մեխանիզմներ՝ ապահովելու ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում (Որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականություն, ուսանողական հարցումների անցկացման կարգ, հարցումների վերլուծություն, հանդիպում-քննարկումներ և այլն):

Որակի ապահովման բաժինը որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու նպատակով հավաքագրել և վերլուծել է հետևյալ տեղեկատվությունը՝

- Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների վերջին չորս տարիների (2016-2020 ուստարիներ) հաշվետվությունները, նրանց բարելավմանն ուղղված առաջարկությունները և դրանց հիման վրա համապատասխան ստորաբաժանումների, պատասխանատու մարմինների իրականացրած բարելավումները:

  Արդյո՞ք բարելավման միջոցառումներ ձեռնարկվել են, արդյո՞ք առաջարկությունները նպաստել են ուսանող-շրջանավարտների կրթական վերջնարդյունքների օբյեկտիվ, անաչառ գնահատմանը: Այս և նմանատիպ հարցադրումների օգնությամբ է իրականացվել վերլուծությունը:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության կարծիքների հիման վրա վերլուծությունները:
- Պրակտիկայի և կարիերայի բաժնի համագործակցությունն արտաքին շահակիցների հետ:

1. Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բուհում ապահովվելու մեխանիզմներից մեկն արտահայտվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում նրանց ընդգրկվածությամբ /Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ և կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի

գործատուներ և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ/, որը հնարավորություն է տալիս բուհին ՄԿԾ-ների արդյունքը գնահատել ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունների միջոցով:

ՀՖԿՍՊԻ-ում ավարտական ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվել և անցկացվել է համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի, ՀՖԿՍՊԻ-ում գործող բակալավրի ամփոփիչ ատեստավորման կարգի, մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգի:

Ուսումնասիրելով ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները՝ դուրս են բերվել հիմնականում բարելավման առաջարկությունները, համեմատվել են նույն ուստարվա բոլոր մասնագիտությունների, ինչպես նաև նախորդ տարիների հաշվետվությունների հետ, հիմք են հանդիսացել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի զեկույցների վերաբերյալ գիտխորհրդի քաղվածքները, ինչպես նաև հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման հարցերով ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս խմբային քննարկումները (2020թ.):

Նշենք, որ կային հաշվետվություններ, որտեղ առաջարկություններ առանձնապես չեն արվել, ընդհանուր ներկայացվել է հանձնաժողովի անդամների գոհունակությունը ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Մարզական լրագրություն մասնագիտության 2016թ., 2017թ. մագիստրոսական ատենախոսությունները, 2020թ. Սպորտ՝ ԱՖԿ՝ կինեզիոլոգիա մասնագիտության մագիստրոսական ատենախոսությունները, 2017թ., 2018թ. բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման «Մասնագիտություն» առարկայի ամփոփիչ ատեստավորման արդյունքները, 2018թ., 2019թ. կինեզիոլոգիա, 2018թ. ադապտիվ ֆիզիկական կուլտուրա մասնագիտությունների, 2020թ. Մարզական լրագրություն մասնագիտության ամփոփիչ ատեստավորման աշխատանքները, ըստ երևույթին, բավարարել են հանձնաժողովին. թե աշխատանքների բովանդակությունը, թե պաշտպանության մակարդակը, ինչպես նաև թեմաների ընտրությունն ու արդիականությունը բարձր են գնահատվել, հայտնել են դրական կարծիք:

Առանձնացրել ենք հետևյալ առաջարկությունները բակալավրի կրթական ծրագրի բարելավման վերաբերյալ.

2017թ. Ֆիզիկական կուլտուրա առողջարարական շեղում ունեցող անձանց համար, կինեզիոլոգիա մասնագիտության «Ինտեգրատիվ ֆիզիկական ռեաբիլիտացիա» առարկայի համար՝

- Վերանայել հարցաշարերը, ընդգրկել իրավիճակային խնդիրներ, թեստեր, որն էլ իր հերթին խթան կհանդիսանա բացահայտելու ուսանողի կլինիկական մտածողությունն ու գործնական հմտությունները:

2017թ. Կինեզիոլոգիայի ամբիոնի կողմից կատարված ավարտական աշխատանքները դիտարկելիս.

- Ցանկալի կլիներ, որ ուսանողները հնչեցնեին հիվանդությունների կանխարգելման կարևորությունը:

  Այսպիսով, հանձնաժողովը կարևորել է իրավիճակային խնդիրների կիրառումը ուսումնառության և գնահատման գործընթացում, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելմանն ուղղված տեսությունների վերլուծումները:

2018թ. բակալավրի «Սպորտ» մասնագիտության (առկա, հեռակա ուսուցում) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկությունները հետևյալն են՝

- Ավարտական աշխատանքների եզրակացություններում անհրաժեշտ է ներկայացնել ստացված արդյունքների մասին տվյալներ, որոնք կարտացոլեն թեմայի գիտական արժեքն ու արդիականությունը:
- Պաշտպանությունների որակն էլ ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է նախնական պաշտպանությունների ժամանակ հնարավորինս վեր հանել բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են հետազոտական աշխատանքներում:
- Զեկուցումների ժամանակ անհրաժեշտ է շեշտը դնել ոչ թե թեմայի արդիականության ներկայացման վրա, այլ բուն հետազոտության:
- Ցանկալի է, որ բոլոր շրջանավարտները (հեռակա ուսուցում) պաշտպանությունը ներկայացնեն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, որը կբարձրացնի զեկույցների մատուցման մակարդակը:

  Այսպիսով, հանձնաժողովը գրեթե նույն բարելավման առաջարկություններն է ներկայացրել թե՛ հեռակա և թե՛ առկա ուսուցման համակարգում իրականացվող ավարտական աշխատանքների վերաբերյալ, հիմնական տարբերությունը հեռակա ուսուցման շրջանավարտների աշխատանքների զեկուցման մակարդակը բարձրացնելու նպատակով սահիկաշարերի կիրառման առաջարկությունն էր:

2018թ. «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտություն. առանձնացվել են մասնավորապես հետևյալ հիմնական առաջարկությունները՝

- Անհրաժեշտ է գրականության ցանկում ընդգրկել հայրենական գրական աղբյուրները, ինչպես նաև հղում կատարել ժամանակակից գրական աղբյուրներին:
- Ընդլայնել և խորացնել միջառարկայական կապերը՝ ավարտական աշխատանքների որակը բարձրացնելու, հետազոտությունների առջև դրված խնդիրներն ավելի արդյունավետ և նպատակաուղղված իրականացնելու նպատակով:
- Ամփոփիչ ատեստավորման ընթացքում ընդգրկել ժամանակակից տեխնոլոգիաներ: */Վերոնշված 3 առաջարկություններն ամրագրվել են 2019թ.–ի հանձնաժողովի հաշվետվությունում՝ նույն մասնագիտության շրջանակում/:*
- Եզրակացությունները պետք է բխեն բուն հետազոտության խնդիրներից և փաստով հիմնավորված լինեն:

- Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գրախոսների կարծիքների ձևակերպմանը, որտեղ պետք է նշվի աշխատանքի հետազոտական կողմը կամ գիտական նորույթը և այն բացթողումները, որոնք առկա են ավարտական աշխատանքներում:
- Դասախոսություններում ավելի մեծ տեղ հատկացնել մարզական տերմինաբանության, օլիմպիական շարժման պատմության և օլիմպիական խաղերի կազմակերպման, ինչպես նաև հայաստանցի և հայ մարզիկների օլիմպիական խաղերի մասնակցության հարցերին:

Այսպիսով, հանձնաժողովի առաջարկությունները վերաբերում էին անգամ թեմաների ձևակերպումներին և կառուցվածքային պահանջներին:

2019թ. «Մասնագիտություն» առարկայի ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ՝

- Վերանայել հարցաշարերում հարցերի դրվածքը, ձևակերպումը և ճիշտ տրամաբանությունը:

2019թ. «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկությունները հետևյալն են՝

- Անհրաժեշտ է գրականության ցանկում ընդգրկել հայրենական գրական աղբյուրները, ինչպես նաև հղում կատարել ժամանակակից գրական աղբյուրներին:
- Ընդլայնել և խորացնել միջառարկայական կապերը՝ ավարտական աշխատանքների որակը բարձրացնելու, հետազոտությունների առջև դրված խնդիրներն ավելի արդյունավետ և նպատակաուղղված իրականացնելու նպատակով:
- Ամփոփիչ ատեստավորման ընթացքում ընդգրկել ժամանակակից տեխնոլոգիաներ: */Վերոնշված 3 առաջարկություններն ամրագրվել են 2018թ.–ի հանձնաժողովի հաշվետվությունում՝ նույն մասնագիտության շրջանակում/:*
- Ավարտական աշխատանքների ներկայացված աշխատանքների 70%-ը հետազոտական բնույթի են, համապատասխանում են ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Որոշ աշխատանքներում կային ուղղագրական սխալներ:
- Քանի որ բուհում պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ֆիզիկապես ծանրաբեռնված են. ամենօրյա ֆիզիկական ծանր պարապմունքներից բացի ստիպված են շաբաթական 5-6 ժամ մարզվել՝ լինելով շատ մարզաձևերի հավաքական թիմերի անդամներ և պարապմունքներից հետո ակադեմիական աշխատանք կատարել, հետևաբար՝ ինստիտուտը պետք է ստանա ավարտական աշխատանքների կատարման ուրույն կարգավիճակ:

Այսինքն, հանձնաժողովի առաջարկություններն ուղղված էին հիմնականում հետազոտությունների առջև դրված խնդիրներն ավելի արդյունավետ և նպատակաուղղված իրականացնելուն և ավարտական աշխատանքների որակը բարձրացնելուն:

2020թ. «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվության առաջարկությունները հետևյալն էին՝

- Ավարտական աշխատանքների ներածության մեջ ավելի հստակ ներկայացնել ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության մեթոդները, աշխատանքի ծավալը և կառուցվածքը:
- Ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների գլուխների և պարագրաֆների կառուցվածքին և բովանդակությանը, քանի որ դրանցից շատերում, հատկապես 2-րդ գլխում պարագրաֆները բաղկացած են 3-4 նախադասություններից:
- Ուսումնասիրության արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակների, նկարների, գծապատկերների միջոցով և դրանց հիման վրա կատարել վերլուծություններ, համեմատություն և ընդհանրացում:
- Առանձին մարզիկների, մարզիչների ֆոտոպատկերները, վարժությունների և խաղերի նկարներն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե աշխատանքի տեքստում, այլ հավելվածում:
- Ընդլայնել ուսումնասիրվող գրականության քանակը, անպայման ընդգծել վերջին հինգ տարվա գրականությունը:
- Պաշտպանության ժամանակ տրվող հարցերի պատասխանները պետք է լինեն հակիրճ, հստակ և համոզիչ:

2020թ. ԱՖԿ մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունում արվել են հետևյալ առաջարկությունները՝

- Ավարտական աշխատանքների թեմաները պետք է լինեն արդիական և հիմնավորված, համապատասխանեն մասնագիտությանը:
- Թեմայի ընտրության հարցում ղեկավարը պետք է ճիշտ ուղղորդի ուսանողին հասկանալով դրա այժմեականությունը և անհրաժեշտությունը ոլորտի համար: Ուսանողը պետք է տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին, օտար լեզվով գրականություն ուսումնասիրի, վերլուծություններ անի: Հեռակայող ուսանողները պետք է նույնպես մասնակցեն գիտաժողովների, որպեսզի հասկանան գիտության կարևորությունը կրթության որակի բարձրացման հարցում: Ուսանողները պետք է ուսումնասիրեն միջազգային փորձը իրենց հետագա աշխատանքներում կիրառելու համար:

2020թ. «Սպորտ» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունում արվել են հետևյալ առաջարկությունները՝

- Ստեղծված իրավիճակով (կորոնավիրուսի համավարակով) պայմանավորված ավարտական քիչ թվով աշխատանքներ էին փորձարարական բնույթի:

2020թ. հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկությունը մեկն է՝

- Ցանկալի կլինի, որ հետագա տարիներին աշխատանքները ներկայացնելիս ուսանողներն ունենան սահիկաշար:

Այսպիսով, 2020թ. հանձնաժողովի առաջարկությունները վերաբերում էին կառուցվածքային պահանջներին, աշխատանքը հստակ, համոզիչ ներկայացնելուն, ինչպես և նախորդ տարիներին՝ թեմաների, գրականության ընտրությանը: Հատկապես շեշտվում է հեռակայող ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Բակալավրի կրթական ծրագրի բարելավման առաջարկությունների հիման վրա իրականացված քայլերը

Դրական փոփոխություններ

Յուրաքանչյուր ուստարվա ավարտին գիտխորհրդի նիստում հանձնաժողովի նախագահները զեկուցել են ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Լսելով և քննարկելով ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝ գիտխորհուրդն արձանագրել է բացթողումներն ու թերությունները, որոշվել է հանձնարարել պատասխանատու մարմիններին, համապատասխան ստորաբաժանումներին շտկել թերությունները, բարելավման քայլեր ձեռնարկել, իսկ որոշման հսկողությունը սովորաբար հանձնարարվել է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

Վերլուծելով նախորդող տարիների առաջարկությունները, կարող ենք փաստել, որ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ ամփոփիչ ատեստավորման արդյունքներում ամրագրվել են հետևյալ **դրական** փոփոխությունները՝ ըստ հանձնաժողովների նախագահների արտահայտած կարծիքների.

- 2017թ. հեռակա ուսուցման «Մասնագիտություն» առարկայի ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ արտահայտվել են այսպես՝
  -շրջանավարտներին հաջողվել էր ընտրել այնպիսի թեմաներ, որոնք արդիական էին և իսկապես կարիք ունեին հետազոտման և վերլուծության:
- 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման «Մասնագիտություն» առարկայի հանձնաժողովի կարծիքով ինստիտուտի ուսանողների և շրջանավարտների ավարտական ատեստավորման մակարդակը զգալիորեն բարելավվել է, որը արդյունք է ինչպես ինստիտուտի ղեկավարության պահանջկոտության խստացման, այնպես էլ ստորաբաժանումների աշխատանքների որակյալ կատարման:
- 2020թ. ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքում հատկապես առկա ուսուցման բոլոր շրջանավարտները ներկայացրել են իրենց աշխատանքները սահիկաշարերի օգնությամբ, օգտագործել են տեղեկատվական տեխնոլոգիաները:
- 2020թ. առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ առանձնացվել է հետևյալը՝
  - թեմաների ընտրությունը արդիական էր, ժամանակակից,
  -ավարտական աշխատանքները քննարկվել են ամբիոններում, անցկացվել են նախնական պաշտպանություններ,

-կիրառվել են ժամանակակից տեխնիկական միջոցներ:

- 2020թ. «Մարզական լրագրություն» մասնագիտության շրջանավարտների պաշտպանության ներկայացրած ավարտական աշխատանքները գրված էին գրագետ և համապատասխանում էին ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Բացթողումներ/թերացումներ

- Չնայած նախնական պաշտպանություններին դասախոսների խստապահանջ մոտեցմանը, ավարտական աշխատանքներում դեռ առկա են մնում թե' տեխնիկական, թե' բովանդակային թերություններ, որոնք կրկին վերհանվել են հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից՝ կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքներն ապահովելու նպատակով:
- Պետք է նշենք, որ երկու ֆակուլտետների հաշվետվություններում հանձնաժողովի կողմից արված առաջարկությունները կրկնվում էին: Ճիշտ է, երկու ֆակուլտետներն էլ իրականացնում են «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագիրը՝ նույն կրթական վերջնարդյունքներով, սակայն կարծում ենք, որ տարբեր սպորտաձևերի, մասնագիտացումների շրջանավարտների տարբեր թեմաներով, հետազոտական տարբեր խնդիրների վերաբերյալ իրականացված աշխատանքները կարող են էապես տարբերվել թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ մատուցմամբ, հետևաբար՝ պետք է ձգտել, որ շրջանավարտների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների լիարժեք դրսևորման, բացահայտման հնարավորությունը գուցե հաշվետվության ներկայացման նոր ձևաչափով հնարավոր լինի տարբերակված արտահայտել:
- Կան հաշվետվություններ, որոնք գրեթե նախորդ տարիների հաշվետվությունների կրկնություններն են:
- Կան հաշվետվություններ /2020թ./, որոնց բովանդակությունը հստակ չէ, անորոշ է ձևակերպված, պետք է գուշակել, թե որ մասնագիտության, ուսուցման ձևի մասին է խոսքը:
- 2017թ. «Ինտեգրատիվ ֆիզիկական ռեաբիլիտացիա» առարկայի ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկությունը, այն է՝ վերանայել հարցաշարերը, ընդգրկել իրավիճակային խնդիրներ, թեստեր, ինչպես պարզվեց, չի ապահովվել հաջորդ տարիների համար և դրա հետ կապված չկա որևէ հիմնավորում:

  Այսինքն, կարող ենք ենթադրել, որ հաշվետվությունները, ինչպես հարկն է, չեն քննարկվել համապատասխան ստորաբաժանման կամ խորհրդի կողմից, անհրաժեշտ փոփոխություններ չեն իրականացվել և առաջարկությունները շարունակել են պարզապես մնալ որպես խնդիր:

Մագիստրատուրայի շրջանավարտների ատենախոսության պաշտպանության հանձնաժողովի առաջարկությունները

2019-2020 ուստարվա մագիստրատուրայի կրթական ծրագրի «Մենեջմենտ», «Մարկետինգ», «Հոգեբանություն», «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությունների շրջանավարտների մագիստրոսական աշխատանքների պաշտպանության հաշվետվություններում ներկայացված առաջարկությունները աշխատանքների բարելավման ուղղությամբ հետևյալն են՝

- Թեմաների ընտրության հարցում ավելի ուշադիր լինել վերնագրերի ձևակերպումներին: Փորձել համագործակցել գործատուների հետ:
- Մագիստրոսական աշխատանքների բովանդակային հիմքում դնել գիտական, մեթոդական և գործնական նորույթ պարունակող տարրեր:
- Մագիստրոսական թեզը պետք է բաղկացած լինի երեք գլխից, 60-70 էջի վրա շարադրված և ունենա տեսական, վերլուծական, հետազոտական և գործնական բաղադրիչներ, լինի ավարտուն հետազոտություն:
- Աշխատանքի տեսական հիմքում դնել ժամանակակից հայրենական և միջազգային մասնագետների մոտեցումները՝ ավելի թարմացված գրականության ցանկով:
- Զեկույցներն ավելի հստակեցնել, դրանք ներկայացնելիս առավել չափով շեշտադրում կատարել աշխատանքում առաջադրված խնդիրների և դրանց լուծման ուղիների, ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքների ամփոփ ներկայացման, զարգացման միտումների և հնարավորությունների վրա՝ ներկայացնելով ամփոփված եզրակացություններ ու հիմնավորված առաջարկություններ:
- Գործնական վերլուծություններն իրականացնել կոնկրետ սպորտային կազմակերպությունների կամ կառույցների օրինակով վեր հանելով դրանց մոտ առկա մարքեթինգային հիմնախնդիրները:
- Պաշտպանությունների որակը էլ ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է նախնական պաշտպանությունների ժամանակ հնարավորինս վեր հանել այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են հետազոտական աշխատանքներում: Զեկուցումների ժամանակ անհրաժեշտ է հիմնական շեշտը դնել ոչ թե թեմայի արդիականության ներկայացման, այլ բուն հետազոտության:
- Գրախոսներն իրենց կողմից տրված կարծիքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնեն ոչ միայն դրական կողմերին, այլև բացասական:
- Զեկուցումների ժամանակ անհրաժեշտ է հիմնական շեշտը դնել ոչ թե ներածության, այլ հենց բուն հետազոտության վրա:
- Պաշտպանությունների որակը էլ ավելի բարձր մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է նախնական պաշտպանությունների ժամանակ հնարավորինս վեր հանել այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են հետազոտական աշխատանքներում: Զեկուցումների ժամանակ անհրաժեշտ է հիմնական շեշտը դնել ոչ թե թեմայի արդիականության ներկայացման, այլ բուն հետազոտության:

Ուսումնասիրվել և առանձնացվել են մագիստրատուրայի 2018-2019 ուստարվա «Մարզական լրագրություն» մասնագիտության ատենախոսությունների պաշտպանության վերաբերյալ հետևյալ առաջարկությունները՝

- Քանի որ ապագա մարզական լրագրողից վերջնարդյունքում ակնկալվում են հետազոտական աշխատանքի կարողություններ ու հմտություններ, անհրաժեշտ է առարկայական նկարագրերում ներառել թեմայի հետազոտման համեմատական մեթոդը: Ըստ դրա ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար շահեկան կլինի հետազոտվող թեման քննել որևէ միջազգային ճանաչում ունեցող համօրինակի հետ համադրական (եթե անհրաժեշտ է հակադրման) տրամաբանությամբ: Սա հնարավորություն կտա տվյալ թեմային առնչվող հիմնահարցերը դիտարկելու միջազգային ընդունված չափանիշների համատեքստում՝ ավելի համարժեք դարձնելով ավարտական աշխատանքի գնահատումը:
- Քանի որ միջազգային մարզական լրագրության զարգացման մեջ առկա է նեղ մասնագիտացման միտումը, հարկ է հաշվի առնել մագիստրոսի կոչման հավակնորդի բակալավրական փորձն ու նախասիրությունները: Հետևանքում կունենանք այնպիսի հետազոտող մասնագետներ, որոնք ԶԼՄ-ներում կկարողանան գործել որպես որևէ կոնկրետ մարզաձևի փորձագետներ:
- Հարկավոր է ընդլայնել ապագա մագիստրոսների աշխատանքի գործիքակազմը՝ ավելի մեծ տեղ հատկացնելով մուլտիմեդիոն հմտություններին՝ տեքստի պատրաստում, նկարահանում, խմբագրում, մոնտաժ, տեսաշարի և ձայնի տեղադրում: Հարկ է նշել, որ այս աշխատանքի հիմքերը պետք է դրվեն բակալավրի կրթական ծրագրերում:

  Նշենք, որ 2020թ. հաշվետվությունը նախորդից տարբերվում է միայն տվյալներով (ուսանողների թիվը, գնահատականները):

Մագիստրատուրայի կրթական ծրագրի բարելավման առաջարկությունների հիման վրա իրականացված քայլերը

Ինչպես արդեն նշեցինք, յուրաքանչյուր ուստարվա ավարտին գիտխորհրդի նիստում զեկուցվել են ամփոփիչ ատեստավորման, ատենախոսությունների պաշտպանությունների արդյունքները և գիտխորհրդի կողմից որոշում է ընդունվել հանձնարարել պատասխանատու մարմիններին, համապատասխան ստորաբաժանումներին՝ շտկել արձանագրված թերությունները, բարելավման քայլեր նախաձեռնել:

Վերլուծելով նախորդող տարիների առաջարկությունները՝ կարող ենք առանձնացնել ամրագրված հետևյալ դրական փոփոխությունները՝ ըստ հանձնաժողովների նախագահների արտահայտած կարծիքների:

Դրական փոփոխություններ

- 2016թ., 2017թ. Մարզական լրագրության մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունն ինքնուրույն և գիտահետազոտական աշխատանքների համադրություն էր, որի գլխավոր նպատակը մասնագիտական բնույթին ու նկարագրին համապատասխանող տեսական և գործնական գիտելիքների ու մեծածավալ նյութի բազմակողմանի վերլուծությունն էր:
- 2019թ. մարզական լրագրության մագիստրանտների կատարած աշխատանքների արդյունքները ամփոփելով՝ հանձնաժողովի նախագահն իր հաշվետվությունում փաստել է, որ մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունը տեսական և գործնական գիտելիքների, գիտահետազոտական և վերլուծական աշխատանքների համադրություն է՝ ուսումնասիրված մեծածավալ գրականությամբ:
- 2019թ. դեկտեմբերի մագիստրատուրայի հեռակա ուսուցման Մարզական լրագրության հանձնաժողովի առաջարկությունն արդեն ամբիոնի դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում է: Այն է՝ ընդլայնել ապագա մագիստրոսների աշխատանքի գործիքակազմը՝ ավելի մեծ տեղ հատկացնելով մուլտիմեդիա հմտություններին (տեքստի պատրաստում, նկարահանում, խմբագրում, մոնտաժ, տեսաշարի և ձայնի տեղադրում):

  Քանի որ նշված հմտությունների ձևավորման հիմքերը դրվում են բակալավրի կրթական ծրագրերում, և ներկայումս ՄԿԾ-ի արտաքին գնահատման հիման վրա տարվում են վերանայման աշխատանքներ, աշխատանքային խումբը բուհի ղեկավարության աջակցությամբ անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (վերանայվում են ուսպլաններում ընդգրկվող դասընթացները, համալրվում են նյութատեխնիկական ռեսուրսները) մրցունակ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով:

Բացթողումներ/թերացումներ

- 2019-2020 ուստարվա մագիստրատուրայի առկա ուսուցման հանձնաժողովի առաջարկությունները բոլոր մասնագիտությունների համար, կարելի է ասել, բառացիորեն կրկնվում են: Գրեթե նույն բովանդակությունն ունեն նախորդ տարիների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները մագիստրատուրայի տարբեր ուղղությունների համար:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների և գիտխորհրդի որոշումների հիման վրա պլանավորվող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ ամբիոնների նիստերի արձանագրություններ առկա չեն:
- Հեռավար ուսուցման արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ավարտին ՈԱԲ-ի կողմից կազմակերպված ֆոկուս խմբային քննարկման ընթացքում բարձրաձայնվեցին հարցեր, ավարտական ամփոփիչ ատեստավորման աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության

վերաբերյալ, ուսանողների կողմից ուրվագծվեցին, բացահայտվեցին մի շարք խնդիրներ, մտահոգություններ, դժգոհություններ, օրինակ այն, որ մագիստրատուրայի «Մենեջմենտ», «Մարկետինգ», «Հոգեբանություն» մասնագիտությունների հանձնաժողովների նախագահները սպորտի ոլորտից հեռու մասնագետներ են, անհասկանալի էր, թե ինչու հանձնաժողովը նախապես չէր ծանոթացել աշխատանքներին՝ այն արժանի գնահատելու համար:

Այս և նմանատիպ շատ խնդիրներ, կարծում ենք, իրենց լուծումը կգտնեն հետևողական աշխատանքների իրականացման շնորհիվ:

Հետևություններ

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հետևողական աշխատանքներ չեն իրականացվել ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի խորհրդատվությունների, առաջարկությունների հիման վրա, որը ՄԿԾ-ների մշակման և գնահատման գործընթացում կարող էր շատ օգտակար լինել:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների մասնակցությունը՝ որպես որակի ապահովման կարևոր մեխանիզմ, լիարժեք չի կիրառվում բուհում: Անհրաժեշտ է պատասխանատու մարմինների (ամբիոն, ֆակուլտետի խորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր) ուշադրության կենտրոնում պահել հետևյալ հարցերի պատասխանները՝

- Ինչպե՞ս և ո՞վ է որոշում, թե ի՞նչ գործողություններ է պետք ձեռնարկել այդ արդյունքների (հաշվետվության եզրակացությունների ու առաջարկությունների) հիման վրա:
- Ո՞վ է մասնակցում այդ գործընթացին:
- Մշակվո՞ւմ է գործողությունների ծրագիր դրանց հիման վրա:
- Պլանավորված գործողությունները ո՞ւմ հետ են քննարկվում: Ինչպե՞ս է լուսաբանվում գործողությունների ընթացքը:
- Ո՞վ է հետևում գործողություններն իրականացվել են, թե ոչ, որքանո՞վ են արդյունավետ եղել: Որքա՞ն ժամանակ է տևում արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակումը և իրականացումը:
- Ինչպիսի՞ ազդեցություն ունի շահակիցներից ստացված տեղեկատվությունը:

Հետևողական աշխատանքների արդյունքները հիմք կհանդիսանան մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման գործընթացում պատշաճ որոշումներ կայացնելիս:

Առաջարկություններ

1. Մշակել ամփոփիչ ավարտական ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության նոր ձևաչափ, խուսափել նախորդ տարիների կամ նույն տարվա տարբեր մասնագիտությունների հաշվետվությունների կրկնություններից, իհարկե, եթե

խնդիրները մնացել են անկատար, բարենորոգման գործընթաց չի իրականացվել, բնականաբար, անհրաժեշտ է վերհանել դրանց խոչընդոտներն ու պատճառները:
2. Տալ ժամանակ համապատասխան մարմիններին խորհրդատվությունների, առաջարկությունների հիման վրա մշակելու և հետևողականորեն իրականացնելու գործողությունների ծրագիր:
3. Իրականացնել պարտականությունների հստակ բաշխում, կարևոր է որպեսզի այս գործընթացներում ներգրավված անձնակազմը և ուսանողները կազմեն հստակ պատկերացում ընթացակարգերի մասին և իմանան, թե որ մարմինն է կրում վերջնական պատասխանատվությունը:

2. Մասնագիտության կրթական ծրագրերի որակի գնահատման վերլուծություն (արտաքին փորձաքննության հիման վրա)

Մասնագիտության կրթական ծրագրերի որակի գնահատումն ունի կարևոր ազդեցություն դասավանդման և ուսումնառության գործընթացի շարունակական վերափոխման, բուհի առաջարկած մասնագիտությունների բարելավման համար: ՀՖԿՍՊԻ-ն ձգտում է գնահատման այդ գործընթացը կազմակերպել արդյունավետ և հիմնավորված:

Համաձայն Մասնագիտության կրթական ծրագրերի արտաքին գնահատման ընթացակարգի (24.02.2020թ.)՝ 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում ձևավորվեցին հանձնաժողովներ՝ հաշվի առնելով գնահատման ենթակա ծրագրի բնույթը և նպատակները, մասնագիտական ոլորտը, հանձնաժողովի անդամների ծրագրի մշակման, իրականացման և գնահատման փորձը:

Արտաքին գնահատման տրամադրվեցին ***բակալավրի*** երեք մասնագիտությունների կրթական ծրագրերը և ***մագիստրատուրայի*** չորս մասնագիտությունների կրթական ծրագրերը:

Բակալավրի կրթական ծրագիր

	Մասնագիտությունը և դասիչը	Կրթական ծրագիրը և դասիչը	Որակավորումը	Արտաքին շահակից
1.	Մասնագիտական մանկավարժություն 011401.00.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.6	Մանկավարժության բակալավր	***Վանաձորի պետական համալսարանի Ֆիզդաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ամբիոն: ՀՊՏՀ-ի ֆիզիկական դաստիարակության ամբիոն: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա Երևանի Սմբատ Բյուրատի անվան հ.125 հիմնական դպրոց: Երևանի Խրիմյան Հայրիկի անվան թիվ 10 հիմնական դպրոց Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր***
		Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.6		***Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն***
2.	Սպորտ 101401.00.6	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա 101401.02.6	Սպորտի բակալավր	***Ֆիզիոթերապիստ, Biodex մասնագետ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի առաջին բուժ-օգնության ԱԻ ՔՊ և մարդու և կենդանիների անատոմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոն Երևանի պետական բժշկական համալսարան Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի ռեբիլիտացիայի և ֆիզիոթերապիայի կլինիկա***
3.	Լրագրություն 032101.00.6	Մարզական լրագրություն՝ 032101.01.6	Լրագրության բակալավր	***Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետ***

Մագիստրատուրայի կրթական ծրագիր

	Մասնագիտությունը և դասիչը	Կրթական ծրագիրը և դասիչը	Որակավորումը	Արտաքին շահակից
1.	Սպորտ 101401.00.7	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) 101401.02.7	Սպորտի մագիստրոս	***Ֆիզիոթերապիստ, Biodex մասնագետ***

2.	Հոգեբանություն 031301.00.7	Հոգեբանություն 031301.01.7	Հոգեբանության մագիստրոս	***Պետական կառավարման ակադեմիա «ՈԳԵՇՆՉՈՒՄ հոգեբանական արվեստանոց» հ/կ***
3.	Կառավարում 041301.00.7	Մենեջմենթ 041301.01.7	Կառավարման մագիստրոս	***Երևանի պետական համալսարան, Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոն***
4.	Շուկայագիտություն (մարքեթինգ) 041401.00.7	Մարկետինգ 041401.01.07	Կառավարման մագիստրոս	***ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոն, ՀՖՀ Մարքեթինգի ֆակուլտետ ՀԱՕԿ***

ՀՖԿՍՊԻ-ի բակալավրի կրթական ծրագրի «Մասնագիտական մանկավարժություն», «Սպորտ», «Մարզական լրագրություն», մագիստրատուրայի կրթական ծրագրի «Սպորտ», «Հոգեբանություն», «Մարկետինգ» և «Մենեջմենտ» մասնագիտությունների հետագա բարելավման նպատակով իրականացվել է արտաքին գնահատում՝ ոլորտի փորձառու մասնագետների կողմից: ՄԿԾ-ները ուսումնասիրվել են գործատուների, ինչպես նաև ոլորտի ակադեմիական ներկայացուցիչների կողմից՝ տարբեր ձևաթերթերի կիրառմամբ:

Ակադեմիական ոլորտի մասնագետների կողմից կարևորվել են հատկապես՝ իրավանորմատիվային փաստաթղթերի հղումների առկայությունը, ՄԿԾ-ի վերջնարդյունքների վերաձևակերպումները՝ դրանք ՈԱՇ-ին համապատասխանեցման, տաքսոնոմիայի ակտիվ բայերի գործածման, դրանց չափելիությունը, մասնագիտական, կամընտրական դասընթացների ընտրությունը, գործնական դասերի ծավալի մեծացումը՝ պրակտիկ ոլորտի մասնագետների ընդգրկմամբ, դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները, հետազոտակենտրոն կրթություն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների, սարքավորումների առկայությունը, ուսանողների և դասախոսների շարժունությանն ու միջազգայնացմանը նպաստող բենչմարքինգի իրականացումը և այլն: Ներկայացնենք առաջարկությունները՝

1. ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ հստակ ձևակերպել ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ ապահովելով դրանց չափելիությունը և դրանց հիման վրա ընտրել գնահատման մեթոդներ:
2. Շտկել ՄԿԾ-ի վերջնարդյունքների և առարկաների վերջնարդյունքների կապի և բովանդակության հետ կապված թերությունները:
3. Վերանայել առարկաների անվանումները, որոնք առավելապես գիտական հոդվածների կամ առանձին դասախոսությունների վերնագրեր են, վերջնարդյունքային չեն:
4. Իրականացնել առարկայացանկի անհրաժեշտ փոփոխություններ՝ միտված մասնագիտական խորացվածությունն ապահովելուն (Նեղ մասնագիտական առարկաների մի մասն ունի վերանայման կարիք մի քանի տեսանկյունից /ուսպլանում տեղը, մոդուլի ամբողջականությունը, անհրաժեշտությունը և այլն):
5. Դասընթացներին տալ ավելի գործնական ուղղվածություն՝ մեծացնել գործնական դասերի ծավալը, ընդգրկել պրակտիկ ոլորտի մասնագետների:

6. ՄԿԾ-ում նշել իրավական նորմատիվ ակտերի, բուհի սահմանած նորմատիվային փաստաթղթերի համապատասխան էլեկտրոնային հղումները:
7. Իրականացնել ՄԿԾ-ի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) ՝ խթանելով ուսանողների և դասախոսների շարժունությանն ու միջազգայնացմանը:
8. Անհրաժեշտություն կա նաև դասընթացների գրադարանային ֆոնդը համալրելու ժամանակակից գրականությամբ՝ ուսումնառողների էմպիրիկ հետազոտական գործունեության աջակցման նպատակով:
9. Հնարավորության դեպքում ավելացնել պրակտիկայի տևողությունը կամ գոնե ուղղորդել ուսանողներին մեկամսյա կամավորական աշխատանքի՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպություններում:
10. Կազմել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագիր:
11. Մագիստրատուրայի կրթական ծրագիրը սուղ ժամաքանակով (տևողությունը մեկ տարի) բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ է ոչ մասնագիտական առարկաների (որ գրեթե կեսն են կազմում) հնարավորինս փոխարինումը մասնագիտականով (հիմնականում հոգետեխնոլոգիական բնույթի):
12. Թարմացնել ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների կազմման համար օգտագործվող գրականությունը ինչպես ժամանակագրական, այնպես էլ հեղինակային առումով:
13. Փոխել մագիստրատուրա ընդունվելու կարգը:
14. Հետազոտակենտրոն կրթություն ապահովելու համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական հետազոտության սարքավորումներ, նորագույն տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն և որակյալ մասնագիտական աջակցություն:
15. Վերանայել դասախոսական կազմին ներկայացվող կոմպետենցիաները, նախընտրելի է, եթե առանձնացվեն ընդհանուր կոմպետենցիաները, որոնք համապատասխանում են բոլոր դասախոսներին, և մասնագիտական կոմպետենցիաները՝ ըստ ամբիոնների:
16. Վերաձևակերպել մանկավարժական և մասնագիտական պրակտիկայի կոմպետենցիաները:
17. Յուրաքանչյուր կրթաբլոկից հետո առաջարկել կամընտրական առարկաներ:
18. Մասնագիտական առարկաները կազմելիս և ժամերը բաշխելիս հաշվի առնել հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչները:

ՄԿԾ-ների արտաքին գնահատման հիման վրա իրականացված բարելավումները.

11.05.2020թ. ռեկտորի հրամանով ձևավորվել են Մասնագիտության կրթական ծրագրերի փորձագիտական հանձնաժողովներ՝ բակալավրի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, բարելավման և արտաքին գնահատման նպատակով:

Վերանայվել են 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի և բակալավրի կրթական ծրագրերը (բացառությամբ բակալավրի կրթական ծրագրի Մասնագիտական մանկավարժություն՝ Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա կրթական ծրագրի, մագիստրատուրայի

Մասնագիտական մանկավարժություն մասնագիտության կրթական ծրագրերի)՝ մասնավորապես՝ վերանայվել են կրթական ծրագրի վերջնարդյունքները, ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը և որոշ դասընթացների ծրագրեր: Լրամշակվել է նաև պրակտիկայի ծրագրի ձևաչափը:

Առարկայական նկարագրի նոր ձևաչափը (հաստատված Գիտխորհրդի թիվ 18 նիստով, 31.08.2020թ.) հնարավորություն է ընձեռում դասավանդման և ուսումնառության մեթոդները կապակցել ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ, սահմանել յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշները:

Աշխատանքներ են տարվում ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով համալրման ուղղությամբ (գրադարանային ֆոնդ, ինտերակտիվ լսարաններ, նորագույն տեխնոլոգիաներ և այլն):

3. Պրակտիկայի և կարիերայի բաժնի համագործակցությունը արտաքին շահակից-ների հետ

Պրակտիկայի և կարիերայի բաժինն իր կանոնադրության համաձայն համագործակցում է արտաքին շահակիցների՝ պոտենցիալ գործատուների, շրջանավարտների, կազմակերպությունների հետ՝ նպաստելով ուսանողների մասնագիտական զարգացմանը և կարիերայի օժանդակմանը:

Պրակտիկայի և կարիերայի բաժնի ղեկավարը ամբիոնների ներկայացուցների հետ 2017թ.-2020թ. հանդիպումներ է ունեցել դպրոցների տնօրենների, ֆիզկուլտուրայի ուսուցիչների և բուժական հաստատությունների ղեկավարների հետ: Հանդիպումների նպատակն էր արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակներում բարելավել պրակտիկաների կազմակերպման գործընթացը, աջակցել ինստիտուտի շրջանավարտներին աշխատանքի տեղավորվելու, կարիերան ապահովելու գործում: Հանդիպումների մեծ մասը չեն արձանագրվել, սակայն Պրակտիկայի և կարիերայի բաժինը կազմել է արձանագրություններ (2018թ.) ՀՃԿՍՊԻ-ի պրակտիկանտ-ուսանող-ների վերաբերյալ դպրոցի տնօրենների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների հետ հանդիպումների մասին:

Արձանագրության օրակարգերը մանկավարժական պրակտիկայի կազմակերպման, ինստիտուտ-դպրոց համագործակցության ընդլայնման հարցերի մասին էին: Հանդիպումների ժամանակ դպրոցների տնօրենները, ֆիզկուլտուրայի ուսուցիներն իրենց գոհունակություն են հայտնել պրակտիկանտների պատրաստվածության, կարգապահության և պրակտիկայի գործընթացում ակտիվ ներգրավվածության մասին: Առաջարկվել է՝

- Ինստիտուտի բարձր կուրսերի ուսանողներին ներգրավել դպրոցի արտադասարանական պարապմունքների կազմակերպմանը՝ որպես կամավորներ:
- Ինստիտուտի կողմից մեթոդական օգնություն տրամադրել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին:
- Տրամադրել մասնագիտական գրականություն:

Պրակտիկայի և կարիերայի բաժնի ղեկավարն առաջարկել է՝

- Կազմակերպել շրջայցեր ինստիտուտում դպրոցների աշակերտների համար:
- Օգնել համալրելու ֆիզիկական կուլտուրայի մասնագետների թափուր աշխատատեղերը դպրոցներում՝ այդ մասին տեղեկատվությունը փոխանցելով Ինստիտուտի Պրակտիկայի և կարիերայի բաժին:
- Կազմակերպել տարբեր մարզական և առողջարարական միջոցառումներ:

Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել այսօրինակ առաջարկությունների հետ կապված.

- Պրակտիկայի և կարիերայի բաժինն իր հաշվետվություններում անդրադարձել է դիմորդների մասնագիտական կողմնորոշման հարցերին. Մանկավարժական

պրակտիկաների ընթացքում մեթոդիստների ղեկավարությամբ դպրոցներից ինստիտուտ կատարած աշակերտների շրջայցերը Երևան քաղաքի տարբեր դպրոցներից էին: 2019-20 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում Որակի ապահովման բաժնի կողմից 1-ին կուրսի ուսանողների շրջանում մասնագիտության ընտրության դրդապատճառների և կրթական միջավայրի բարելավման վերաբերյալ իրականացված հարցումների վերլուծությունից պարզ դարձավ, որ չնայած 2018-2019 ուստարում հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների շրջանում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման շուրջ երեք տասնյակ այցեր, այնուհանդերձ հարցված ուսանողներից որևէ մեկը բուհում կրթություն ստանալու որոշումը չի կապել այդ այցերի ընթացքում ստացած տեղեկատվության հետ:

Ըստ հարցման արդյունքների, ուսանողների գերակշիռ մասը (55%) ընկերներից է տեղեկացել ինստիտուտի մասին: Հարցվածների 15%-ը նշել է, որ ինստիտուտում ներկայումս սովորող ուսանողները, բուհն ավարտած ուսանողները կամ բուհին ծանոթ անձիք են տեղեկատվություն տրամադրել բուհի վերաբերյալ, նրանք են եղել իրենց տեղեկատվության աղբյուրը:

Դրական է, որ բուհի ներկայիս ուսանողներն ու շրջանավարտներն են ապագա ուսանողներին ուղղորդում դեպի ՀՖԿՍՊԻ, սակայն հարկավոր է առավել մեծ ուշադրության դարձնել բուհի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան պաշտոնական էջի, ինչպես նաև ոչ միայն Երևան քաղաքի դպրոցներում, այլև մարզերում դիմորդների ներգրավման աշխատանքների ակտիվացմանը՝ ավելի գրավիչ ու սպառիչ տեղեկատվություն տրամադրելով նրանց:

- Հիմնականում պրակտիկաների ընթացքում, նաև որոշ դեպքերում այլ ժամանակահատվածում դպրոցներում կազմակերպվել են բաց դասեր, մասնագիտության պրեզենտացիաներ, տեսական դասեր, մրցումներ, մի քանի դպրոցի տրամադրվել է գրականություն:
- Գործատուների շրջանում ՀՖԿՍՊԻ-ի ուսանող-պրակտիկանտների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ /տեսական գիտելիքների, գործնական հմտությունների, նրանց վարվեցողության և էթիկայի կանոններին հետևելու, թիմում աշխատելու հմտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու և այլն/ բավարարվածության հարցումներ որպես այդպիսին վերջին երեք տարիների ընթացքում չեն իրականացվել: Սակայն դպրոցներից և կլինիկաներից ստացվել են շնորհակալագրեր ուսանող-պրակտիկանտների բարձր մասնագիտական պատրաստվածության, կազմակերպած տարբեր միջոցառումների համար, ինչպես նաև բանավոր առաջարկներ՝ կապված պրակտիկայի ծրագրերի վերանայման և նրանց պատրաստվածության տարբեր կողմերի բարելավման հետ: Պետք է փաստենք, որ արտաքին շահակիցների՝ տվյալ դեպքում գործատուների, առաջարկությունները չեն արձանագրվել և որևէ նպատակաուղղված փոփոխություն պրակտիկայի ծրագրերում չի իրականացվել:

Ցանկալի կլիներ հարցաթերթիկային, առցանց հարցումների կամ ֆոկուս խմբային քննարկումների միջոցով ևս պարբերաբար իրականացվեր պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների (որոնց հետ կնքված է համագործակցության հուշագիր) կարծիքի ուսումնասիրություն, որը հնարավորություն կտար բազմակողմանի ուսումնասիրել շրջանավարտների, պրակտիկանտ-ուսանողների պատրաստվածության վերաբերյալ նրանց կողմից վերհանված խնդիրները, թերությունները և օգնել, ուղղորդել ուսանողին դառնալ մրցունակ մասնագետ իր ընտրած ոլորտում, ձևավորել նոր մեթոդներով կրեատիվ աշխատելու ունակություններ:

- ❖ Կրթօջախի զարգացման կարևոր նախապայման է գործատուների հետ բուհի արդյունավետ կապի ապահովումը: 2018թ.-ի «Բուհ-գործատու համագործակցության նոր եզրեր» խորագրով կլոր սեղան-քննարկումը ներքին և արտաքին շահակիցների համագործակցության լավագույն օրինակ է, որը հնարավորություն տվեց քննարկելու գործատուի ունեցած պահանջները, քանի որ գործատուն միշտ բարձր որակավորված մասնագետ է փնտրում, իսկ բուհական կրթությունը պետք է օգնի շրջանավարտին հաստատվելու տվյալ աշխատաշուկայում:

  Գործատուների առաջարկով վերանայվել են 2018-19 ուստարվա ուսումնական պլանները՝ ավելացել օտար լեզվին, պրակտիկային հատկացվող կրեդիտները, իսկ թե որքանով է այս փոփոխությունն արդյունավետ, պարզ կլինի ՄԿԾ-ների հետագա մշտադիտարկման արդյունքում:

- ❖ Պրակտիկայի արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր ուստարի գիտխորհրդում ներկայացվել է հաշվետվություն, արդյունքները քննարկվել են, արվել են առաջարկություններ: Օրինակ՝ 2017-2018 ուստարվա պրակտիկայի արդյունքների մասին Պրակտիկայի և կարիերայի բաժնի ներկայացված հաշվետվությունը լսելով՝ ՀՖԿՍՊԻ-ի գիտխորհուրդը որոշել է՝

- ○ Պրակտիկայի ժամանակահատվածը արդյունավետ օգտագործել գիտական, ավարտական աշխատանքների նյութերի հավաքման համար:

  Այս ուղղությամբ ևս շոշափելի աշխատանքներ չեն իրականացվել, գուցե այն պատճառով, որ պրակտիկայի կանոնակարգը կամ պրակտիկայի ծրագրերը նման նպատակ կամ խնդիր չեն սահմանել:

  Նշենք նաև, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ՀՖԿՍՊԻ-ի Որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման ընթացքում մագիստրանտների հետ ունեցած հանդիպման ժամանակ արձանագրվել է հետևյալը՝ «ուսանողների կողմից բարձրաձայնվեց մագիստրատուրայում մեկամյա ծրագրի նպատակահարմարության դիտարկման հարցը, վերջիններս նշեցին, որ մեկ տարին բավարար չէ հետազոտություն իրականացնելու համար. այս խնդիրը կարելի է մասամբ լուծել՝ նախադիպլոմային պրակտիկան կապակցելով ուսանողների կողմից արվող հետազոտություններին»:

- ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում գիտահետազոտական պրակտիկայից առաջ մագիստրատուրայի մենեջմենտ և մարկետինգ մասնագիտության մագիստրանտներին ծանոթացնել նախարարության փաստաթղթաշրջանառության ձևերին, գործավարությանը և աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններին:

Իրականացվել են՝

Մագիստրատուրայի «Մենեջմենտ» և «Մարկետինգ» մասնագիտության մագիստրանտներին ընձեռվել է հնարավորություն պրակտիկա անցնելու Սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունում, և ինչպես ներառված է մագիստրատուրայի «Մենեջմենտ» և «Մարկետինգ» մասնագիտությունների գիտահետազոտական պրակտիկայի ծրագրի ընդհանուր աշխատանքային ծավալում, ծանոթանալ իրավական նորմատիվային փաստաթղթերի հետ, փաստաթղթաշրջանառությանը, գործավարությանը և աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններին:

Սակայն պրակտիկայի արդյունավետության գնահատում չի իրականացվել: Նախատեսվում է նաև նշված մասնագիտությունների գծով պրակտիկայի ժամանակահատվածը օգտագործել ավարտական աշխատանքների նյութերի հավաքման նպատակով՝ պրակտիկան կապակցելով ուսանողների կողմից արվող հետազոտություններին:

Հետևություններ և առաջարկություններ

Չունենալով արձանագրված բավարար հիմքեր լիարժեք վերլուծություն իրականացնելու համար, այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ բուհում ցածր է արտաքին շահակիցների, այդ թվում գործատուների ներգրավվածության աստիճանը, բացակայում են ըստ տարիների կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմները և դրանց կիրառման արդյունքում իրականացված աշխատանքների լավ ու վատ կողմերի վերլուծումները:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ, նրանց հետ համատեղ իրականացվող միջոցառումները նպաստում են ծրագրերի միջազգայնացմանը և աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցմանը: Հետևաբար անհրաժեշտ է՝

- Ամրապնդել շահակիցների տարբեր թիրախային խմբերի հետ կապերը:
- Պրակտիկայի բաժնի կողմից գործատուների հետ կազմակերպել հանդիպումներ՝ բացահայտել գործատուի կարիքները յուրաքանչյուր պրակտիկայի շրջափուլին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում:
- Գործատուների կարիքների վերհանումը կարևորելով՝ ՌԾ-ի մշակման աշխատանքային խմբում ներգրավել գործատուների ներկայացուցիչների:
- Գործատուների ներկայացուցիչներին, ըստ անհրաժեշտության, հրավիրել գիտխորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

- Տարբեր ծրագրերի /օրինակ՝ դրամաշնորհային/ շրջանակում կազմակերպել հանդիպումներ արտաքին շահակիցների հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ամփոփելով բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների, Մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության արդյունքների, արտաքին շահակիցների հետ Պրակտիկայի և կարիերայի բաժնի համագործակցության վերլուծությունները արտաքին շահակիցների ներգրավվածության վերաբերյալ՝ կարող ենք փաստել հետևյալը՝

- 2017-2018 ուստարվա համար ՈԱԲ-ի զարգացման ծրագրով նախատեսված գործողությունը /Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը և գնահատել արդյունավետությունը/ ոչ միայն ժամանակին չի իրականացվել, այլ իրականացվել է մասամբ՝ այդ նպատակով կիրառելով որոշ գործիքներ, մեխանիզմներ, որոնք կատարելագործման, վերանայման կարիք ունեն, հետևաբար՝ անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեխանիզմներ, որոնք կբարձրացնեն շահակիցների մոտիվացիան, հետաքրքրությունները և նրանք, իրոք, գործուն մասնակցություն կունենան վերը նշված և մի շարք այլ կարևոր գործընթացներում:
- Անհրաժեշտ է սահմանել այն հիմնական սկզբունքներն ու մոտեցումները (հասանելիություն, համագործակցություն, հաշվետվողականություն, հրապարակայնություն,...), որոնք նախանշված են շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտման գործընթացներում:
- Որակի ներքին ապահովման բոլոր փուլերում հստակ ներկայացնել նրանց մասնակցությունը՝ սկսած պլանավորում-փաստաթղթավորումից մինչև իրականացում, գնահատում և բարելավում:
- Մշակել ընթացակարգ ՈՆԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության արդյունավետությունը գնահատելու համար, նաև լինել հետևողական, կատարել հստակ դերաբաշխում՝ սկսած պլանավորման գործընթացներից մինչև ՊԻԳԲ շրջափուլի փակումը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ